ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
2019 թվականի նոյեմբերի 27-28-ը
ք. Մոսկվա /Ռուսաստանի Դաշնություն/ գործուղման
արդյունքների մասին

1. Անուն, ազգանուն՝

Նաիրա Կարապետյան

2. Զբաղեցրած պաշտոնը՝

Էկոնոմիկայի նախարարության Եվրասիական տնտեսական միության և արտաքին առևտրի վարչության պետ

3. Գործուղման վայրը և ժամկետը՝

ք. Մոսկվա, Ռուսաստանի Դաշնություն, 2019 թվականի նոյեմբերի 27-28-ը

4. Հրավիրող կողմը՝

Եվրասիական տնտեսական հանձնաժողովի նախաձեռնությամբ

5. Գործուղման նպատակ

Եվրասիական տնտեսական միության առևտրի գծով խորհրդատվական կոմիտեի՝ մաքսասակագնային և ոչ սակագնային կարգավորման ու պաշտպանական միջոցների գծով ենթակոմիտեի նիստին մասնակցելու նպատակով:

6. Քննարկված թեմաները՝

1) Եվրասիական տնտեսական միության միասնական մաքսային սակագնում և Եվրասիական տնտեսական միության արտաքին տնտեսական գործունեության միասնական ապրանքային անվանացանկում փոփոխություններ կատարելու, մասնավորապես՝

- սննդային հավելումների արտադրության համար հումքի բաղադրիչների նկատմամբ ԵԱՏՄ միասնական մաքսային սակագնի ներմուծման մաքսատուրքի 0 տոկոս դրույքաչափի սահմանում,

- օպտիկական մանրաթելերի արտադրության համար պոլիուրեթանային և էպոքսիդային ծածկույթների ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ ծածկագրի դասակարգման և միասնական սակագնի ներմուծման մաքսատուրքի 0 տոկոս դրույքաչափի սահմանում մինչև 31.12.2020թ.,

- առանձին տեսակի խեցգետինների ու ձկների ԵԱՏՄ միասնական մաքսային սակագնի ներմուծման մաքսատուրքի 0 տոկոս դրույքաչափի սահմանում՝ 3 տարի ժամկետով

- էլեկտրական շարժիչով տրանսպորտային միջոցների ԵԱՏՄ միասնական մաքսային սակագնի ներմուծման մաքսատուրքի 0 տոկոս դրույքաչափի սահմանում՝ 3 տարի ժամկետով,

- փայլաթիթեղի ԵԱՏՄ միասնական մաքսային սակագնի ներմուծման մաքսատուրքի 0 տոկոս դրույքաչափի սահմանում՝ 3 տարի ժամկետով,

- տերեֆթալ թթվի և դրա աղերի ԵԱՏՄ միասնական մաքսային սակագնի ներմուծման մաքսատուրքի 0 տոկոս դրույքաչափի սահմանում՝ 2 տարի ժամկետով,

- ձեռքի էլեկտրական գործիքների արտադրության մեջ օգտագործվող առանձին մասերի ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ ծածկագրի դասակարգման և միասնական սակագնի ներմուծման մաքսատուրքի 0 տոկոս դրույքաչափի սահմանում:

2) Ռազմական տրանսպորտային ինքնաթիռների և առանձին տեսակի գործվածքների՝ ԵԱՏՄ միասնական մաքսային սակագնում փոփոխություններ կատարելու մասով՝ ղազախական և ռուսական կողմերի միջև անցկացված խորհրդակցությունների արդյունքների քննարկում:

3) Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կողմից այն ապրանքների ցանկի, որոնց նկատմամբ Հայաստանի Հանրապետության կողմից անցումային շրջանում կիրառվում են Եվրասիական տնտեսական միության միասնական մաքսային սակագներից տարբերվող ներմուծման մաքսատուրքերի դրույքաչափեր՝ արդիականացման մասով առաջարկության քննարկում:

4) Ռուսաստանի Դաշնության կողմից սև մետաղի ջարդոնի՝ Եվրասիական տնտեսական միության տարածքից ժամանակավոր արտահանման քանակական սահմանափակման միակողմանի կիրառման վերաբերյալ ծանուցում:

5) Մաքսասակագնային կարգավորման ոլորտում ԵԱՏՄ անդամ պետությունների նախաձեռնային առաջարկների քննարկման միասնական չափանիշների ձևավորման մեխանիզմների կատարելագործման հարցերի քննարկում:

7. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը՝

Եվրասիական տնտեսական միության առևտրի գծով խորհրդատվական կոմիտեի՝ մաքսասակագնային և ոչ սակագնային կարգավորման ու պաշտպանական միջոցների գծով ենթակոմիտեի նիստին մասնակցել են Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների համապատասխան ներկայացուցիչները և Եվրասիական տնտեսական հանձնաժողովի պաշտոնատար անձիք՝ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի մաքսասակագնային ոչ սակագնային կարգավորման Դեպարտամենտի տնօրեն՝ Գագիկ Քոչարյանի նախագահությամբ:

Ենթակոմիտեի նիստի ընթացքում ներկայացվել են ԵԱՏՄ անդամ պետությունների, այդ թվում՝ հայկական կողմի դիրքորոշումները վերոնշյալ առաջարկությունների և հարցերի վերաբերյալ: Արդյունքում, որոշ հարցերի ուղղությամբ կողմերի միջև ձեռք է բերվել համաձայնություն, ինչպես նաև որոշումներ են կայացվել քննարկվող մի շարք հարցեր Եվրասիական տնտեսական հանձնաժողովի Կոլեգիայի առաջիկա նիստի օրակարգում ներառելու մասով:

8. **Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.**

Ենթակոմիտեի նիստի ընթացքում պայմանավորվածություն ձեռք բերվեց, որ այն հարցերի ուղղությամբ, որոնք դեռևս գտնվում են ԵԱՏՄ անդամ պետությունների ներպետական համաձայնեցման տարբեր փուլերում և որոնց վերաբերյալ դեռևս ոչ բոլոր կողմերն են ներկայացրել պաշտոնական դիրքորոշում, վերջիններիս քննարկմանը անդրադառնալ կողմերի վերջնական դիրքորոշումների առկայության պարագայում:

Միաժամանակ, Եվրասիական տնտեսական հանձնաժողովի մաքսային համագործակցության, ներքին շուկայի գործունեության և ինտեգրման զարգացման Դեպարտամենտների ներկայացուցիչների հետ քննարկվել են տարբեր ոլորտներում առկա, բիզնեսին առնչվող մի շարք խնդիրներ, և առաջարկվել են վերջիններիս կարգավորմանն ուղղված հնարավոր լուծման տարբերակներ:

9. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.

Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների համապատասխան ներկայացուցիչների միջև ձեռք բերվեց պայմանավորվածություն առ այն, որ Եվրասիական տնտեսական միության առևտրի գծով խորհրդատվական կոմիտեի՝ մաքսասակագնային և ոչ սակագնային կարգավորման ու պաշտպանական միջոցների գծով ենթակոմիտեի հերթական՝ 72-րդ նիստը կկայանա ս/թ դեկտեմբեր ամսվա վերջին ք. Մոսկվայում:

10. Ստորագրությունը, ամսաթիվը.

Էկոնոմիկայի նախարարության
Եվրասիական տնտեսական միության
և արտաքին առևտրի վարչության պետ
Նաիրա Կարապետյան

03.12.2019 թ.